

Արանք կամ անձամբ, կամ իրանց ազնւոյններէ միջոցով կարող են հիմնել Հայաստանում գործարարներ, արհեստանոցներ, գներ հողեր, արդիւնաբերել բամբակ, ծխախոտ, վաճառահանել բուրդ, մրգեր և այլ հազար ու մի բերքեր... Ահա մի օրինակ. Մուշ արդիւնաբերում է ընտիր ծխախոտ, բայց արդիւնաբերում է փոքր քանակութեամբ, քանի որ գիտէ թէ մշտական և հաստատ առնող չը կայ: Երևակայեցէք որ Կ. Պօլսոնում կազմվել է մի ընկերութիւն, որ կապվելով Մուշի հետ, հաստատ պայման է կազմում որ իւրաքանչիւր տարի ծխախոտի մի յայտնի քանակութիւն կը գնի: Պարզ է որ զիւղացին կը սխալ արդիւնաբերել բերքի աւելորդը, հաստատ գիտենալով որ այսուհետեւ առնող ունի: Այսպիսով հայ երկրագործը պարագմունք գտնելով, տեղի վրա կը փնայ և այլ ևս չի գաղթի: Կ. Պօլսի հայ հարուստն էլ համ հայրենիքին օգուտ կը տայ, համ էլ ինքն կը շահվի:

Թող հարուստի վերադարձը ոչ թէ անձնական լինի, այլ իր հարստութեան, իր փողերի միջոցով: մենք դրանով գոհ կը լինենք, — Ժողովրդի դուրսիւնը կը բարձրվի և ինքն էլ կը շահվի: Ինչ որ մենք ասեցինք ծխախոտի արդիւնաբերութեան վրա, կարող էինք վերաբերել Հայաստանի ամեն տեսակ արդիւնաբերութիւններին, ամեն տեսակ բերքերին, որոնցով այդքան հարուստ է հայի հայրենիքը:

Պէտք է կազմել Կ. Պօլսի մէջ մի ընկերութիւն, որ կը կրի օրինակի համար «Հայաստան գաղթելու նպաստող ընկերութիւն» անունը և որի պաշտօնը կը լինի զիցուք ուղարկել Հայաստան ուսուցիչներին, հիմնել իր գումարներով տպարաններ վանի կամ էրգորումի մէջ, ուղարկել իր ծախսով երիտասարդներին, որոնք գաւառական թերթի խմբագիրներ կարողանան լինել... Գաւառական թերթը աւելի մօտ լինելով ժողովրդի կեանքին, կը մշակի տեղական հարցեր և այդ թերթերի միջոցով յարուցված

խնդիրները օգուտ կը քաղէ Կ. Պօլսի լըրագրութիւնը, որ կորոված լինելով իր մայրենի երկրից կատարելագոյն գուրկ է Հայաստանը ճանաչելուց: Ընկերութիւնը կարող է նպաստներ տալ Կ. Պօլսի բեռնատնակներին, որպէս զի նրանք վերագառնան Հայաստան երկրագործութեամբ պարագմունքներ, որոնք կը նպաստեն երկրագործութեանը, կը գնեն հողեր և ձեռնառու պայմաններով կը ծախեն երկրագործ դասին, և այնուհետեւ կը շահվեն երկրագործութեան արդիւնքներից, կը հիմնեն արհեստանոցներ և կը բանեցնեն այդ արհեստանոցներում անխտիր հայաստանցի ազգայնականութեան այլ և այլ ցիղերի ներկայացուցիչներին: Վերջը իրանք էլ մեծ շահ կունենան այդ արդիւնաբերութիւնից և մի և նոյն ժամանակ կը պահեն հայ մշակ ոյժերը մայրենի հողի վրա, այդպիսով արգելք կը դնեն անընդհատ գաղթականութեանը Հայաստանից:

Մենք կրկնում ենք. եթէ պոլսեցիները կարողացան կազմել Հայաստանում ուսում տարածող ընկերութիւններ, որոնցից ոչինչ նիւթական շահ կը կայ և որոնց շարժառիթը եղել է բուն բարոյական, ի՞նչի չեն կարող արգելիւն ա գ ո Ր Ծ ա կ ա ն ընկերութիւններ կազմել, որոնք եթէ օրինաւոր կերպով առաջ տարվեն, ահագին շահ էլ կը տան ընկերութիւնների բաժանորդներին:

Բարձր իդէալներ քարոզել, — շատ անգամ ապարդիւն է լինում: Բայց ազգասիրութիւնը, բարոյական գաղափարները՝ միացած նիւթական շահի հետ, — դժուար իրագործելի չեն: Լուսաւորութիւնը միայն ժողովրդի սակունց ոյժի հետ՝ հրաշքներ կարող է գործել:

Հետեւեալ յօդուածով մենք կը փակենք մեր այդ յօդուածների շարքը, ընդհանուր

դատողութիւններ ներկայացնելով ընթերցողին, մեր և մեր աշխատակցի յարուցած խնդրի հետեւանքների մասին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆՐ

Շնորհակալութեամբ ստացանք Շուշու մէջ տպված «Չորս մանրամասն» թարգմանութիւն Ն. Տէր-Աւետիքեանի, Ա. գիրքը և նոյնպէս Շուշու տպված պ. Ն. Տէր-Աւետիքեանի «Բնար խօսնակ» գիրքը: Առաջինը Ս. Հախումեանցի հրատարակութիւն է, իսկ երկրորդը Տիգրան Նազարեանցի:

«Մշակի» № 84 մէջ տպված հայ դերասանուհի, օրերով Աստղիկի մեզ ուղղված նամակի մէջ մի սխալ է մտել: Սկզբից, փոխանակ «Թիֆլիս», 9 մայիսի» սխալմամբ տպվեցաւ «Թիֆլիս, 9 մարտի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

«Порядокъ» լրագրի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը Բեռլինից: Գերմանիան ոչինչ բանում չէ կամենում յետ մնալ Ռուսաստանից: Ռուսաստանում հրէաներին ջարդում են Նիխամեդադի մէջ, իսկ այսօր Արգենտինայի մէջ: Բայց դուք գուցէ չը գիտէք, թէ ի՞նչ բան է Արգենտինա: Նա սլավոնական գնեկիօսն է, որ գտնվում է Պոզնանի մէջ և որ թարգմանված է գերմանացիներից իրանց կուլտուրական լեզուով: Հրէաներին գլխաւորապէս ծեծում էին շրջականների գիւղացիքը: Միայն մի վերաւորված կար և նա էլ հրէայի բեկօլներից վերաւորվեցաւ: Այդ հրէայի բարկութիւնը և բեկօլներ արձակելը առիթ տուեց կուլի սկսվելուն: Այդ ցաւալի անցքի իսկական պատճառ

ները նոյն Շտեօկեր, Հենրիցի և նրանց նըմաններն են, որոնք առաջվանից աւելի սաստիկ զրգուում են խաւար ամբոխին հրէաների դէմ և իրանց անթիւ հրատարակութիւններով հրաւիրում են նրան ապստամբվել հրէաների դէմ: Այդ հրատարակութիւնները տարածվում են թէ քաղաքներ և թէ գիւղերի մէջ: «Հաւաքվեցէք, քրիստոնեաներ, ասված է նրանցից մէկի մէջ, և զցեղէն ձեզանից քրիստոնեաներին ճնշող հրէաների լուծը, դուրս արէք հրէաներին, դուրս շնորհին, խաբեաներին, դուրս այդ դժոխային սերունդը: Ոչնչից մի վախենաք, մեր առաջն է բարի հերոսը: Հաւաքվեցէք, ոտքի կանգնեցէք, դուրս արէք հրէաներին, թող նրանք կորչեն իրանց Պալեստինան: Կեցցէ Բիսմարկ, կեցցէ Շտեօկեր և Հենրիցի:»

«Ճշմարտութիւն» անունով լեզուով ծաղրական թերթը տպում է զրգուող երգեր հրէաների դէմ, որոնք երգվում են սկզբից հակահրէական ժողովների ժամանակ և յետոյ անցնում են փողոցների մէջ: Այդպիսի երգերից մէկը երգում էր պահեստի գինուորդ, որի վրա բարկացաւ և բեկօլներ գցեց վերոյիշեալ հրէան, որ և առիթ տուեց անկարգութիւններին:

Այժմ ամեն բան վերջացած է, կարգապահութիւնը վերականգնված, իսկ քննութիւնը դեռ շարունակվում է: Յոյս կայ, որ այդ անցքը առիթ կը տայ վարչութեանը առաջարկել հակասեմիտներին, որ նրանք զսպեն իրանց: Հակասեմիտական շարժումը կատարելագոյն չէ կարելի ճնշել, որովհետեւ նրա առաջն է բարի հերոսը, որ նրանից օգուտ է քաղում իր քաղաքական նպատակների համար:

Պոզնանի թողնելուց առաջ կը պատմեմ մի ծիծաղելի դէպք, որ տեղի է ունեցել այնտեղի լրագրութեան մէջ: Պոզնանի մէջ հրատարակվում է գերմաներէն լեզուով «Posener Tageblatt» լրագիրը, որ շատ անգամ արջի ծառայութիւն է մատուցել

հանդիպած խրճիթի դուռը: Երկար բաղնիքում էր նա, մինչև մի մանկահասակ կին, դուռը բաց անելով, յայտնվեցաւ չնայելի վրա:

— Ի՞նչ էք կամենում, հարցրեց նա, ուշադրութեամբ նայելով օտարականի վրա, թէ և խաւարի մէջ դժուար էր նրան ճանաչել:

— Զանապարհից մուրձված եմ, ի սէր Աստծու, մի անկիւն շնորհեցէք ձեր տան մէջ, որ փոքր ինչ հանգստանամ:

Այդ խօսքերը այնպիսի մի ողորմելի եղանակով արտասանեց նա, որ տանտիրէնը խղճալով, ներս հրաւիրեց:

Երբ մտան խրճիթը, տանտիրէնը իսկոյն ճրագ վառեց, այժմ միայն տեսաւ իր հիւրի այլանդակված կերպարանը, որ աւելի սարսափելի էր իր պատահական և աղտոտված հագուստի մէջ:

Խրճիթում ուրիշ ոչ ոք չը կար. մի քանի երեխաներ պառկած էին թոնրի մօտ, փայլաթի վրա և ծածկված էին ցնցոտիներով: Չը նայելով դուռն չբաւորութեամբ, որ ամեն կողմից աչքի եր զարկում, տանտիրէնը առաջարկեց հիւրին, արդեօք չէր կամենայ նա մի բան ուտել:

— Հնորհակալ եմ, պատասխանեց երիտասարդը, — ուտելու արտօրակ չունեմ, ինձ տուեցէք միայն խմելու ջուր:

Տանտիրէնը տուեց նրան ահագին թասը լիքը ջրով: Երիտասարդը կէսը խմեց և թասը դրեց իր մօտ, որ մնացածն էլ խմէ: Կարծես, նրա ներսում կրակ էր վառվում, որ պէտք էր հանգսնել:

— Կուք տանը մնանակ էք, հարցրեց երիտասարդը իր չորջրը նայելով:

— Մենակ եմ, պատասխանեց տանտիրէնը, — մարդս տանը չէ:

— Ո՞ր է գնացել:

— Գնացել է կուսելու:

— Ո՞ւմ դէմ:

— Պարսիկների դէմ:

մէջ է ընկել և աշխատեց ծածկել իր ուլ լինելը: Զան տղամարդը գնացել էր պարսիկների դէմ կուսելու, կը նշանակէ, նա մտել էր Կապիթ բէկի խումբի մէջ, կը նշանակէ նա նոյն կամաւոր զինուորների թուում էր, որ այս գիշեր ջարդեցին իր հօր և իր զօրքերը:

Տանտիրէնը նստեց իր երեխաների անկողնի մօտ: Երիտասարդը նստած էր նրանից փոքր ինչ հեռու կապեղաթի կտորի վրա: Նա մտաւորութեան մէջ էր, թէ ինչ կը լինի իր դրութիւնը, եթէ այդ կինը կը ճանաչի իրան, Մտածեց կաշառել նրան:

— Երեւի, ձեր ամուսնին այլը աղքատ է, հարցրեց նա, դարձեալ նայելով իր չորջրը:

— Տեսնում էք իմ խրճիթը, պարոն, էլ ինչու էք հարցնում, պատասխանեց տանտիրէնը մաղձոտ կերպով: — Անիծվի մէկը Գաւթիթը, նա ոչ մի գիւղացու մօտ ուտելու հաց չի թողել: Հինգ օր չը կայ, որ մեր տան կայքը ծախել տուեց հարկերի փոխարէն:

Երիտասարդը բարկութիւնից գունաթափվեցաւ: Նրա աչքի առջև նկատվում էին, հայհոյում էին իր հօրը: Բայց նա դապեց իրան և ոչինչ չը պատասխանեց: Այդ նկույթը, ընդհակառակը, սկսեց նրան փոքր առ փոքր հանգստացնել, որովհետեւ դրանից կարելի էր եզրակացնել, որ տան տիրուհին չէ ճանաչում իրան. եթէ ճանաչելու լինէր, չէր համարձակվի որդու մօտ հայհոյել հօրը:

Եւ իրաւ, նա սկսեց չը ճանաչել, բայց երբ աւելի ուշադրութեամբ նայեց նրա վրա, իսկոյն ճանաչեց, որ դա նոյն չարագործի որդին էր, որ Տաթևի ամբողջ վիճակը սարսափի մէջ էր պահում, որ աղքատութիւնը տարածել էր ոչ միայն իր տան մէջ, այլ բոլոր գիւղացիների խրճիթներում: Անողորմ մարդու նոյնպէս անողորմ որդին իրան լաւ ծանօթ էր: Շատ անգամ նրան տեսել էր իրանց գիւղում հարկերը հաւաքելիս,

կամ գիւղացիներին ծեծելիս: Բացի դրանցից նա ուներ մի բնական նշան, որ միանգամ նրան տեսնողը, միւսանգամ պատահելու ժամանակ, իսկոյն կարող էր ճանաչել: Նրա աչքերից մէկը սև գոյն ուներ, միւսը կապույտ:

Բայց ինչու լուեց նա, ինչու ոչինչ չը պատահանեց, երբ լսեց աղքատ կնոջ նկույթը իր հօր մասին: Մի ուրիշ ժամանակ այսպիսի մի խօսք բաւական էր, որ Տաթևի մէկքի հօր որդին հրաւայէր անդամներ խեղդելին: Այժմ ինչու համբերեց նա: Եւ ինչու նա մնացել էր, որ էին նրա բազմաթիւ ծառաները: Այս գիշերային անապան պահուն, այսպէս պատահող վաճառ, ցնկերում թաթախված, նա ճրտեղից էր զգալի: — Ահա այդ հարցերը ծագեցան տանտիրէնի շուրջ գլխում, երբ նա բաւական քննողական աչքով հետազոտեց երիտասարդի աննախանձելի դրութիւնը:

Տանտիրէնը դժուար չէր հասկանալ, որ երիտասարդը յաղթված և պատերազմի դաշտից փախած պէտք է լինի: Բէկի կուկները համբաւ արդէն տարածվել էր ամեն տեղ, բոլորը նրա մասին էին խօսում: Նա լսել էր և այն, որ Գաւթիթ ուրացողը իր որդու հետ հաւաքել են բազմաթիւ զօրք, որ արգելին բէկի Տաթևի սահմանը մտնելը: Այժմ ուրացողի որդին, որ դրմելի դրութեան մէջ, իր խրճիթում ապաստան էր գտել: Այժմ ամեն ինչ պարզ էր տանտիրէնու համար: Իսկոյն ծագեց նրա գլխում մի միտք և նրա չրթուքը զգալի կերպով դողդողացնում:

— Ձեր խրճիթում չը կայ մի առանձին տեղ, հարցրեց երիտասարդը:

— Ի՞նչու համար է, ասաց տանտիրէնը:

— Ես սատակ չորհած եմ, կամենում եմ փոքր ինչ հանգստանալ, կը ցանկանայի առանձին տեղում պառկել, որ ինձ ոչ ոք չը խանգարէ:

«Նա կամենում է թափվել... մտածեց կինը և մի և նոյն ժամանակ նրա դէմքի վրա փայլեց մի չարագուշակ ուրախութիւն:

— Իմ ամբողջ տունը ձեր աչքի առջին է, պատուելի պարոն, պատասխանեց կինը, — տեսնում էք, որ առանձին տեղ չունեմ: Բայց եթէ յարմար կը համարեք, ես ձեզ ցոյց կը տամ մի տեղ:

Նա վեր առեց ճրագը, և իր հիւրի ճանապարհը լուսաւորելով, տարաւ նրան բակը, և մի անկիւնում ցոյց տուեց փոքրիկ շինածք նեղ դռնով: Այստեղ մի ժամանակ հաւաքուն էր, բայց երբ հարկանները (այսինքն նոյն իսկ հիւրը) տարան հաւերը, այնուհետեւ այդ շինվածքը մնաց դատարկ: Այնտեղ ժամանակ առ ժամանակ, անձրեային եղանակներում պառկում էր տանտիրէնը շուշու, և այժմ աւելի շան որջ էր, քան թէ հաւաքուն: Երիտասարդը գլուխը ներս տարաւ, նայեց, ասելով:

— Վատ չէ, դուք միայն մի շոր տարածեցէք, որի վրա կարելի լինիլ պառկել:

— Ես ձեզ համար բարձ էլ կը բերեմ, ասաց տանտիրէնը և վաղեց գէպի խրճիթը:

Երկիւղը այն աստիճան տիրել էր երիտասարդի սրտին, որ նա պատրաստ էր այդ շնաբունի մէջ ևս ապաստան գտնել: Նա գիտէր, որ բէկի մարդիկ իրան հետամուտ եղան, գիտէր, որ հիւմայ որոնում են իրան, — և դրանից աւելի յարկ իր գլուխը ազատելու համար: Պէտք էր մի փոքր հանգստանալ, մի փոքր կաղզուրել սպառնալու ռեժիմը, որ կարող լինի, դեռ արեւ չը ծագած, շարունակել իր փախուստը:

Մի քանի րոպէից յետոյ տանտիրէնը վերադարձաւ, բերելով իր հետ մի փալատի կտոր, մի բարձ և մի վերմակ: Աւելով շնաբունի անմաքրութիւնները մի կողմ տանելով, պատրաստեց նա իր հիւրի անկողինը:

բարձրաստիճան անձանց նրանց ասածները կրկնելով։ Այս անգամ այդ գերմանական պահանջական լրագիրը կամեցաւ հետեւել Բիսմարկի օրինակին և ինչպէս սա սպառնաց բերլինցիներին տեղափոխել մայրաքաղաքը, լրագիրն էլ նկատում է, որ տեղական բարձր վարչութիւնը և իշխանութիւնը կը տեղափոխվին Բրոմբերգ, եթէ Պոզնանի բնակիչները լեհացիներին տեղ գերմանացի պատգամաւորներ չեն ընտրին։

Բիսմարկի օտարոտի սպառնալիքով ըզբաղված է ամբողջ Գերմանիան։ Բիսմարկի արտասանած խօսքերը կատարեալ փոթորիկ բարձրացրին, այնպէս որ մայրաքաղաքը տեղափոխելու սպառնալիքը այժմ հարց է դարձել Գերմանիայի համար։ Գտնցէ իշխան Բիսմարկ ինքն էլ չէր սպասում, թէ ինչպիսի կրքեր կը զարթեցնէր նրա սպառնալիքը։

Բանը նրանումն է, որ Պրուսիայի հետ ծնված է սնված Բերլինը կոպտութեան և զինուորականութեան մի նշանաբան է, որ ատելի է մնացած Գերմանիային։ Փայլուն յաղթութիւններէն ժամանակաւորապէս կուրացած Գերմանիան նոր է հասկացել, որ շատ լիանգ գնով է դնել այդ փայլը, զոհելով նրան իր ազատութիւնը և նիւթական բարօրութիւնը։ Պրուսիացիները և մանաւանդ բերլինցիները միւսներին նման իրանց փառքի ծանրութեան տակ ճնշված բոլոր դժբաղդութիւնները իշխան Բիսմարկին են վերաբերում և երեւակայում են, որ նրանից ազատվելով, կազաւովն զինուորականութեան և կամայականութեան ճիշտ շուկից։ Բայց միւս գերմանացիները հասկացել են, որ իշխան Բիսմարկ միակ պատճառ չէ Գերմանիայի ներքին ցաւալի գրուածան, այլ նա արտայայտում է պրուսական ընդհանուր ոգին, որ միայն կարգապահութիւն է ճանաչում և ատում է ամեն տեսակ ազատութիւն, բացի փելիսօփայական մտքի ազատութիւնը և դա էլ Գերմանիայից անցել է Պրուսիա։

— Դուք մի քանի րոպէ առաջ զանգաւում էիք ձեր աղքատութեան վրա, ասաց նրան երիտասարդը։— Դա ձեզ ասելու եմ բոլորը, ինչ որ ինձ մօտ ունեմ. դրանով դուք կարող էք ուղղել ձեր դրութիւնը։

— Ձեր արծաթե թուղ ձեզ մօտ մնայ, պատասխանեց կինը։— Ըմբռն սովորութիւն չունենք Աստուծոյ հիւրերից փող ընդունելու։

— Բայց ես մի շատ թեթեւ բան կը խնդրեմ ձեզանից։

— Ինչ որ կամենում էք հրամայեցէք։

— Դուք ձեր հիւրի այստեղ լինելը բոլորովին զաղտնի պիտի պահէք։ Իսկ սպասուածները յետոյ ինքներդ կիմանաք։

Այդ մասին անհող կացեք, պարոն, դուք կարող էք հանգիստ քնել այստեղ։ Ինձ համար մի և նոյն է, թէ դուք ով էք, կամ ինչ հանգամանքներից ստիպված ձեզ թաղանթում էք։ Բաւական է, որ ես մի լաւութիւն արած կը լինեմ ձեզ։ Ինչքան լաւ եմ հասկանում, որ պատերազմական ժամանակ է, քիչ բաներ կարող են պատահել մարդիկների հետ...

— Ընդհանրապէս եմ բարեխիտ կին, ասաց երիտասարդը և մտաւ շնորհակալ մէջ։— Ես հաւատացած եմ, որ դուք կը կատարեք ձեր խոստմունքը։

Այն մարդը, որ սովորած էր գեղեցիկ սեփականներում, մեծաքանակ պատրաստած փափուկ անկողիններին մէջ պոկելու տարածվեցաւ կապերու կտորի վրա, գլուխը դրեց կտաւէ բարձի վրա, որ լցրած էր խոտով և մի քրքրված վերմակով ծածկվեցաւ։ Այդ ողորմելի անկողինը նա ինքն էր պատրաստել իր համար։ Դա մի պատիժ էր, որ Աստուած ցոյց էր տալիս նրան, ասելով. «Ինչպէս քո անձի վրա փորձիր, թէ ինչ բան է աղքատութիւնը»։ Քանի հազար ընտանիքներ դու գրկել ես հացից և հագուստից,

Այդ պատճառով մայրաքաղաքի տեղափոխելու միտքը ոգեւորութեամբ ընդունվեցաւ։ Այդ փոփոխութիւնը մի միջոց համարվեցաւ Պրուսիան գերմանականացնելու և իշխանութիւնը աւելի մարդասեր դարձնելու համար։

Կարելի է հաստատու ասել, որ սպառնալու նպատակով արտասանած իշխան Բիսմարկի խօսքերը լաւ հողի վրա են ընկել և վաղ թէ ուշ կը տան իրանց պտուղները։ Բերլինի ազգասէր լրագիրների երկար զատողութիւնները և պրուսիացիների ծաղրը, որոնք առաջարկում են մայրաքաղաքը Վարցին կամ Ֆրիդրիխսբուք տեղափոխել, կօդնեն միւս գերմանացիներին, որովհետեւ առաջինները պնդում են, որ Բերլինը պրուսականութեան կենտրոն է, որի հետ կապված է Պրուսիայի գոյութիւնը և թաղաւորող տան հեղինակութիւնը, հետեւապէս նրանք հաստատում են այն, ինչ որ ամենից տուելի է մնացած Գերմանիայի համար։ Իսկ իշխան Բիսմարկ շարունակում է իր սկսած խաղը։ Նորերումն նա յետ առաւ լայնատալան ներկայացրած լայնատալանի նոր շինութեան նախագիծը, որի մասին մինչև արդի ժամանակները համաձայնութիւն էր կաշարել քաղաքային վարչութեան հետ։ Բայց խտառը պէտք է հաստատէր ծախսերը շինութիւնը սկսելու համար։ Բիսմարկ իր այդ վարմունքը մեկնել է նրանով, որ զործը պէտք է յետաձգել ի նկատի առնելով հաւանական պատահանքները։ Բերլինցիները բարկութեամբ շարժում են զլուրը, իսկ հարաւային գերմանացիները ուրախութեամբ նկատում են. «Աստուած տայ, թող այդ հաւանական պատահանքները շուտ տեղի ունենան»։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլսա, 28 ապրիլի

Արդէն հաղորդեցի ձեզ հեռագրով «Միացեալ ընկերութեան» մէջ այսօր տեղի ունեցած ուրախալի փոփոխութեան մասին, գործադիր ժո-

հիմայ տես, թէ ինչ տեսակ տեղում են պատկուծ քո զոհերը...

Բայց երիտասարդը ամենին ուշադրութիւն չը դարձրեց իր կացութեան վրա։ Նրա զգայարանները այն աստիճան բթացած էին, որ ամենին չէր զգում շնորհակալ մէջ տիրող անտանիկ վարդաշողութիւնը։ Նրա յոգնած, ծարրված անդամները խելոյն հրաւրեցին մի խորին և հանգիստ քուն, որ երբէք չէր վայելած իր հօր տան մեծաքանակ անկողիններում։

Ցանկանալով ձեռքի ճրագը հանգցնելով, կանգնած մնաց շնորհակալ դրան մօտ և երկար ուշադրութեամբ լսում էր քնած հիւրի խռովալու ձայնը։ Եթէ մէկը խաւարի մէջ կարող լինէր նշմարել այդ մանկահասակ կնիշ դէմքի ուրախ արտայայտութիւնը, կը հասկանար, թէ որպիսի անսահման հողեկան բերկրութեան մէջ է դրանք վրումնաւոր երկրի տիրող իշխանի որդուն, իր հարստահարչին նա կոխել էր շնորհակալ մէջ։ Դա մի կատակ էր, մի դժուար և չար կատակ։ Ուրիշ կերպով վրէժխնդիր լինել չէր կարող նա, բայց դրանով էլ չը բաւականացաւ։

Երբ բոլորովին համոզվեցաւ, որ նա քնած է, հեռացաւ շնորհակալ, դիմեց դէպի բակի դուռը, ձեռքը տարաւ փականքին, տեսաւ, որ կողոված է։ Թէեւ դուռը ինքն էր կողովել, բայց կամենում էր նորից ստուգել։ Յետոյ մտաւ խորձիթը և կրկին վառեց ճրագը։ Մօտեցաւ պառկած երեխաներին, նրանք նոյնպէս քնած էին, բոլորը մէկ վերմակի տակ։ Նա ուղղեց վերմակը, որ անհամարձակ երեխաները մի կողմէն վրումնալու էին ապա սկսեց ճրագով խորձիթի քունքները պոկել։ Նա անդադար վեր էր առնում այս և այն առարկաները, նայում էր և մի կողմ էր գցում։ Կարծես, նրանք չէին յարմարվում մի նպատակի, որի համար կամենում էր ծառայեցնել։ Յետոյ գտաւ մի կոտրած դանակ, փորձեց ձեռքի վրա, տեսաւ որ շատ բուլժ էր։

Դովը, որ կազմված էր հին ուղղութեան անդամներէ, ընկերութեան ընդհանուր քուէարկութեամբ գործից հրաժարվեց։ Նոր գործադիր ժողովի նախագահ ընտրվեց դոկտոր Փելլիմալ-ձեան, որին ճանաչում էր իմ մասնաւոր նամակներից։ Նա կը կազմի նոր գործադիր ժողով, որին կը մասնակցէ և պ. Մինաս Չէրազ։ Ինչպէս գործնական արհեստի մասնագէտ, դոկ. Փելլիմալ-ձեան անտարակոյտ իր բռնելիք ընթացքին կը տայ իրական ուղղութիւն, մօտաւորապէս նոյն պրոգրամով, որի մասին անցեալ նամակներում մէջ ընդհանուր դիտողութիւններ կ'ընէր։ Բայց որովհետեւ առաջվայ գործադիր ժողովը թողել է գործերը շատ խառնաշփոթ դրութեան մէջ, վաճառող նոր նախագահին հարկաւոր է բաւական ժամանակ մինչև ամեն բան կարգի դնելը։ Այսպիսով և Պօլսի «Միացեալ ընկերութիւնը» հասկացաւ հանգամանքների կարևորութիւնը ու չը նայելով դանազան յետադէմ մարդիկների զրաւոր ու բերանացի բռնաբանքին, սխալվեց քնից ու փոխեց իր դեկավարողներին։ Այսուհետեւ մնում է յաջողութիւն մաղթել նոր գործադիր ժողովին և ցանկանալ, որ նա հաստատու արդիւնաբեր ուղղութիւն տայ այն ընկերութեանը, որին մենք, ուսանալիքս պատրաստ ենք անշտի համակրել։ Յետոյ կ'ենք նա, որ միանգամ ընդ միշտ նա գին կը դնէ իւրաքանչիւր բարի խորհուրդին, մասնաւորապէս հայերին ճանաչող մարդկանց, եթէ լինեն այդ մարդիկ հէնց իրանցից եւ, կաշխատէ ստէպ ստէպ մեզ տեղեկութիւններ տալ իր ընտրած նոր պրոգրամի, ուղարկած հրահանգների և Հայաստանից ստացած բոլոր հաղորդակցութիւնների մասին, որոնց համեմատ ուսանալիքս էլ իրանց մասնագէտների բերանով չեն զլանայ քննադատել սոցա պրոգրամը և տալ այսպիսով մեր ամենաբից ջերմ սիրած Հայաստանին այն, ինչ կարող է մի էական դեպ անել նորա այնչափ մեծ ու դժուարաբայթ անտեսական վերքերին։ Թող հիմայ հանգիստ առնեն դանազան «Միացեալներ» ու փոխանակ իրանց զինից դուրս դատողութիւններ տալու, դնան իրանց արհեստով պարսպեն ու խաշխաշով մարդիկ բռնեն։

Հիմայ մնում է կանանց ընկերութիւնների ուղղութիւնը փոխված տեսնել, որի մասին կը խօսեմ շուտով այստեղի մամուլի մէջ։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Սօփիայից հեռագրում են լրագիրներին հետեւալը. «Բօլշակովսկի իշխան Ալեքսանդր ընդունեց եւրօպական պետութիւնների դիպլոմատական ներկայացուցիչներին, և յայտնեց իր պատրաստակամութիւնը Բօլշակովսկի կառավարիչ մնալ, եթէ ազգային ժողովը կը համաձայնի նրա ցանկութեան հետ։ Մինչդեռ նախագահը, գնեւրալ Երմոս, իր կողմից հաղորդեց դիպլոմատներին, որ գործերի խճճված դրութեան մէջ լինելու պատճառով, իշխանը պահանջում է սահմանադրութեան գործողութիւնների մի քանի տարով կանգնեցնելը։ Պատգամաւորների ժողովը հաւաքվում է միայն քիչ ժամանակ հաստատելու համար միայն. իսկ մնացած բոլոր բաների մէջ իշխանը գործողութիւնների անպայման ինքնուրոյնութիւն է պահանջում։ Հէնց որ գործերի դրութիւնը կը բարւոյնի, սահմանադրութիւնը նորից իր ոյժը կը ստանայ։ Իշխանը մտադիր է հետեւեալ վերանորոգութիւնները մտցնել՝ պատգամաւորների թիւը պակասեցնել, պատգամաւորների ժողովից պաշտօնական անձանց հրաժարեցնել, շատացնել պատգամաւորների թիւը որոնց իշխանը կը նշանակի»։

— Վիեննայից հաղորդում են, որ աստիճանական լրագիրները հաստատում են, թէ մի քանի պետութիւններ, որոնց թւում է Աւստրիան, դիմեցին, իբր թէ, ուստաց կառավարութեանը հարցմունքներով հարաւում եղած անկարգութիւնների պատճառով։ Ինչի մէջն էին կայանում այդ հարցմունքները—անայտ է, և հէնց ինքն այդ լուրը շատ կասկածելի է երեւում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի։ Այսօր պարսկական արտաքին կարգի դեպտանը ուղարկեցաւ Թէհրան։ Նա կանցնի Մօսկվայից, Նիժնի-Նովոգորոդից և Աստրախանից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի։ Պետական բանկի 5% տոմսով առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 93 ռ. 87 կ., երրորդ 93 ռ. 25 կ., չորրորդ 94 ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 223 ռ. 50 կ., երկրորդ 216 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէ 92 ռ. 75 կ., երկրորդ 92 ռ. 75 կ., երրորդ 93 ռ., օսկի 8 ռ. 10 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօդոնի վրա արժէ 24,12 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 206 մարկ. 25 պֆ.։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Նրան, ինչպէս մեղանշել խղճի և աղնութեան դէմ։ Այդ յանցանք չէր լինի, մի մեծ և սարսափելի յանցանք։ Նրա սիրտը սկսեց սաստիկ բարախել։ Պատրաստ էր վեր կենալ, թողնել և հեռանալ այդ զարհուրելի բնակարանից։

Այդ միջոցին երիտասարդը գեւ. շարունակում էր խօսել քնի մէջ։ Նրա անկապ, խառնափնթիւր խօսքերից կինը խիտ պարզ որոշեց այդ նախադասութիւնը. «պէտք է կատարել բոլոր բէկաններին»... *)

Նա բոլորովին կատաղեց այդ խօսքերը լսելու ժամանակ։ Նա ինչը պատկանում էր նոյն կուսակցութեանը։ Նրա ամուսին այլը նոյնպէս բէկան էր, և բէկի կամաւորների թւում, գտնցէ հէնց նոյն ժամում, կուսում էր նոյն մարդու զօրքերի հետ, որ այժմ տարածվել էր իր առջև, որի կեանքը այդ րոպէում իր ձեռքումն էր։

«Դրանց պէտք չէ խնայել... ասաց նա իր մտքում և նրա աչքերը վառվեցան կատաղի բարկութեամբ, — «Դրանք մարդիկ են կոտորել զբանք, սրբան կնիկներ են անբախտաբեր... չը կայ մի գիւղ, չը կայ մի խորձիթ, որ դրանց ձեռքով ոչնչացած չը լինի... Դրանց պէտք չէ խնայել»...

Վերջին խօսքերի ժամանակ նա խաշակեց իր երեսը, ահալին երկաթեայ մետր սուր ծայրը դրեց երիտասարդի ձախտի վրա և օթակով այնպէս սաստիկ զարկեց, որ մեկը մինչև կենը խրվեցաւ նրա գլխի մէջ։ Նա կրկնեց զարկը և տաք արիւնը դուրս ցայտեց վերքից։ Նրիտասարդը գործեց մի քանի ցնցողական շարժումներ և հանգստացաւ։

Կինը խելոյն դուրս եկաւ, իր ետևից կողպելով շնորհակալ դուռը։

(Կը շարունակվի)

*) Բէկան կոչվում էին Գաւիթ բէկի կուսակցները։

*) Թաւալ մեկ նշանակում է արտասանութեամբ գործածվող երկաթէ մեծ մետր, որ գլխի կողմում օղակ ունի և այնտեղից կապում են անասուններին։

**) Օթակ նշանակում է փայտից շինած մեծ մուրճ։

